

4334

ԵՍ ԱՌԱՋԻՆ ԱՍՑԻՃԱՆԻ

ՎԴԱՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Ե.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1927

3KП

7-20•

NOV 2006

11 JUL 2005

ԼԿՅԵՄ Ա.ՌԱԶԻՆ ԱՍԵՒՃԱՆԻ

№ 9 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

3KՈ.
2-20

ԿՈՄՅԵՐԻՑ ԳՐԱԴԱՐԱՆ

- 1 ԱՇՐԱՅՅԱՆ, Զ. Ո՞վ և ղեկավարում, 38 էջ, 1925 թ., Լենինական Գինը — ր. 15 և
- 2 ԳՐԵԶԵՐ, Գ. Գլուղ-կոմյերիտականներին . Կապիտալիստական յերկիրների յերիտասարդության կյանքի և պայքարի մասին, թարգմ. Գար. Հակոբյան, 80 էջ, 1926 թ., Վաղարշապատ . . . » — ր. 25 և
- ✓ 3. ԳՈՒՄԵՏԻՆ. Խնչպես և կոոուցված Ռ. Լ. Կ. Յե. Մ., 70 էջ, 1925 թ., Վաղարշապատ. » — ր. 25 և.
4. ԳՐԻԳ. Յերկրային սխտեմի մասին, 56 էջ, 1925 թ., Վաղարշապատ . . . » — ր. 30 և.
5. ՅԵՐՇՈՎ. Ա. Կոմսոմոլն ու կոոպերացիան, 90 էջ, 1925 թ., Վաղարշապատ. . . » — ր. 25 և.
- ✓ 6. ԶԻՆՈՎՅԵՎ, Գ. Խնչ պեաք և իմանա և հիշի Համ. Կ. Կ.(բ)մեջ մտնող ամեն մի բանվոր, 62 էջ, 1925 թ., Վաղարշապատ. . . » — ր. 35 և.
7. ԼԵՎԳՈՒՐ. Կոմյերիտի պարտականութունները, 64 էջ, 1925 թ., Յերևան . . . » — ր. 15 և.
8. ԼԵՎԳՈՒՐ. Յերեք սերունդ, 46 էջ, Յերևան — ր. 15 և.
- 9 ԼԵՍԵՎԵՑԿԻ. Խնչպես ևն ալժա պատերազմում, 64 էջ, 1926 թ., Վաղարշապատ » — ր. 25 և.
10. ԼԵՆԻՆ, Վ. Ի. Նամակներ հեովեց, 22 էջ, 1925 թ, Յերևան . . . » — ր. 7 և.
11. » Խնչպես պեաք և լինի կոմյերիտա- ևն 42 էջ, 1926 թ., Լենինական » — ր. 15 և.

25852

764
~~1927~~

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Մ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

31 MAY 2013

4334

Գրատպագր Թ 55բ. Կ. 498. Տիրամ 4000.

Պետերբուրգի յերկրորդ տպարան Յերևանում - 176.

8-92

**ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

**ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ
ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ Ե**

Իճշու կուսակցու- Համամիութենական կոմ-
բյուճճ ոգովում Ե մունիստական կուսակցու-
բանվոր դասակարգի թյունը, բանվոր դասակար-
յեվ ամբողջ աշխա- զի և մեր յերկրի աշխատա-
սավորների անսահ- վորության վողջ մասսայի
ման վստահությամբ միակ առաջնորդն է: Բանվոր
դասակարգն անսահման վստահություն է տա-
ծում դեպի իր կուսակցությունը: Պրոլետա-
րիատը և գյուղացիության մեծամասնությունը
գիտակցում են, վոր միայն Համկոմկուսի ղեկա-
վարությամբ խորհրդային յերկիրը կամրապնդի
հեղափոխության նվաճումները և հաջողությամբ
առաջ կրննթանա դեպի սոցիալիզմ: Համկոմկու-
սի փորձը կարևոր դեր է խաղում միջազգային կոմ-
մունիստական շարժման ղեկավարության մեջ—
մեր սլաշբարի հեղինակությունը չափազանց բարձր
է բոլոր յերկիրների բանվորների շրջանում:

Այն անսահման վստահությունն ուսերը, վորով ոգավում ե մեր կուսակցությունը բանվոր դասակարգի և վորջ աշխատավորության մասսայի մեջ, բանվոր դասակարգի գործի համար կուսակցության մղած չափազանց տևական պայքարի արդյունքն ե:

Հատկապես պայքարի փորձում, բոլոր թրջնամիների դեմ մղած դաժան մարտերում բն վոր դասակարգը համոզվել ե, վոր միայն բայլ շեփկներն են հասկանում և իսկապես աշխարհում բանվոր դասակարգի շ հերի ամ ր, համոզվել ե, վոր բայլշեփկերի կուսակցությունը այդ բանվոր դասակարգի առջ վոր ջ կ տն ե, լավագույն անսահման համարձակ և պրոլետարիատին նվիրված մարտիկների ջոկատը:

Լենինը կուցակցու- Նրա հիմնադրման առաջին րյան հիմնագիրն ու որից կուսակցության պայդր կավարն ե քարը ղեկավարել ե Լենինը:

Լենինը «հիմնադրել ե մեր պողպատե կուսակցությունը կ ուղցել ե նրան տարեց տարի, տարել ե նրան ցարիզմի հարվածների տակ, վարժեցրել և կոփել ե նրան բանվոր դասակարգի դավաճանների դեմ մղած կատաղի պայքարում»:

Նրա մարտական առաջնորդությամբ «մեր կուսակցությունը, ծածկված վառուղի ծխով, ամ-

բողջ յերկրում, իր կարող ձեռքով բարձրացրել ե հոկտեմբերի կարմիր դրոշը, ճնշել ե թշնամիները ղիմադրությունը, նախկին ցարական Ռուսաստանում հաստատել ե աշխատավորների ամուր գերիշխանությունը»:

«Այն ամենն, ինչ կա պրոլետարիատի մեջ ձշմարիտ վեհ ու հերոսական — ըմբոստ միտք, յերկաթե, անընկճելի, համառ, ամեն ինչ հաղթանարող կամք, սրբազան ատելություն, ատելություն մինչև մահ ղեպի ստրկությունն ու հալածանքը, հեղափոխական կիրք, վորը սարեր ե շարժում, անսահման հավատ ղեպի մասսաների ստեղծագործական ուժերը, հսկայական կազմակերպչական հանձար, այդ բոլորն իր հրաշալի մարմացումն եր գտել Լենինի մեջ»¹⁾:

Լենինն անձնավորել ե մեր յերկաթե բայլշեփկյան կուսակցությունը: Բանվորական շարժման պատմության մեջ՝ աշխատավոր մասսաների ղեպի Լենինը տաժած անորինակ վստահությունը, կուսակցության վայելած վստահությունն ե, վոր սնուցել ե Լենինը պայքարի տասնամյակների ընթացքում:

Մեր կուսակցություն- Մեր կուսակցությունը, — նը բանվորական ե ատում ե Լենինը, — բանվոր

¹⁾ Լենինի մահվան առթիվ կուսակցության կենտկոմի արած ղիմումից:

դասակարգի ազատագրման համար զիտակից, առաջավոր մարտիկների միութիւնն է»:

Բանվոր դասակարգը կուսակցութեան մեջ համախմբուած է իր մարտիկներից ամենալավերին, բանվոր դասակարգի գործին ավելի նվիրվածներին:

Մեր կուսակցութիւնը բանվորական է: Նա պայքարում է բանվոր դասակարգի վերջնական նպատակի՝ կոմունիզմի համար: Կուսակցութեան հիմնական կորիզը հանդիսանում է նրա բանվորական մասը:

Տեսնենք, թե ինչ կազմ է ունեցել կուսակցութիւնը 1924 թվի հունվարի 1-ին և 1926 թվի հունվարի մեկին:

Կուսակցութեան կազմը 1924 թվի հունվարի 1-ին

Անդամներ		
Բանվորներ	Գյուղացիներ	Այլ
150,200	80,600	97,600
46 ⁰ / ₁₀₀	24 ⁰ / ₁₀₀	30 ⁰ / ₁₀₀
Թեկնածուներ		
Բանվորներ	Գյուղացիներ	Այլ
46,100	47,700	23,700
39 ⁰ / ₁₀₀	41 ⁰ / ₁₀₀	20 ⁰ / ₁₀₀
Ընդամենը	կուսակցութեան	մեջ յեղել է
445,900	հոգի:	

Կուսակցութեան կազմը 1926 թվի հունվարին 1-ին

Անդամներ		
Բանվորներ	Գյուղացիներ	Այլ
386,700	134,100	111,000
61 ⁰ / ₁₀₀	21 ⁰ / ₁₀₀	18 ⁰ / ₁₀₀
Թեկնածուներ		
Բանվորներ	Գյուղացիներ	Այլ
219,300	141,900	72,900
50 ⁰ / ₁₀₀	33 ⁰ / ₁₀₀	17 ⁰ / ₁₀₀
Ընդամենը	կուսակցութեան մեջ յեղել է	1,076,600
հոգի:		

Ի՞նչ է առում զիտագրումը: Դիտարանն առում է, վոր յերկու տարվա ընթացքում բանվորների քանակը խիստ աճել է: Կուսակցութեան 100 անդամի նկատմամբ բանվորների թիվը 46-ից աճել է մինչև 61, կուսակցութեան անդամութեան 100 թեկնածուների նկատմամբ 39-ից մինչև 50: Իսկ յեթե վերցնենք կուսակցութեան բոլոր անդամների ու թեկնածուների քանակը, ապա կտեսնենք, վոր 1924 թվի հունվարի 1-ին 100 անդամ ու թեկնածուներին ընկնում էր 44 բանվոր, իսկ 1926 թվի հունվարի 1-ին՝ 56:

Կուսակցութիւնը ձգտում է իր շարքերը գրավել բանվոր դասակարգի լավագույն բոլոր

տարրերին: Կուսակցութեան աճուած կանոնաւորելու բնագավառում 14-րդ համագումարն առաջարկում է այնպիսի քաղաքանութիւն վարել, «վորի նպատակը պէտք է լինի բարձրացնել կուսակցական կազմակերպութեանները և վորակական կազմ, ավելի մեծ թվով բանվորները գրավել կուսակցութեան շարքերը և շարունակ բարձրացնել կուսակցական պրոլետարական կորիզի տեսակարար կշիռը»: Միաժամանակ համագումարը վերժում է այն քաղաքականութիւնը, «վորը կարող է ունենալ այնպիսի հետևանք, յերբ կուսակցական շարքերը չափից դուրս կուռչեն և կըլցվեն արհմիութիւնների և պրոլետարական կազմակերպութեանների դպրոցը շանցած կիսապրոլետարական տարրերով»:

Նոր ուղղութիւնով՝ կուսակցութեան շարքերը հենց այդ որինակ ուղեցման քաղաքականութիւն վարելու առաջարկութիւնը, համագումարը դիտում է վորպէս «լենինիզմի հետ վոչինչ չունեցող» առաջարկութիւն:

Յերբեմն հարց է տրվում. — ինչե կուսակցութեանը բանվորական է, ապա ի՞նչու նրա մեջ կան բավական թվով գյուղացիներ և ինտելիգենտներ:

Կուսակցութեանն իսկուպէս իր շարքերն է ընդունում վոչ-պրոլետարական խավերից դուրս

յեկածներին, քայց միայն այնպիսիներին, վորոնք ամբողջապէս յեվ լիովին հանգել են բանվոր դասակարգի տեսակետին: Կուսակցութեան մեջ մտնողից պահանջվում է, վոր նա ամբողջապէս համաձայն լինի կուսակցութեան կանոնադրութեանը, անշեղորեն լենինիզմի կուսակցութեան յուրաքանչյուր վորոշման: Բանվոր դասակարգի գործին ծառայելու իր պատրաստակամութիւնը, կուսակցութեան մեջ մտնողը պէտք է ապացուցէ գործով՝ անկուսակցականների մեջ կուսակցութեան գաղափարների տկտիվ պրոպագանդայով, սոցիալիստական շինարարութեան, կամ թե պրոլետարիատի թշնամիների հետ մըղվող գինված պայքարի ճակատում իր որինակելի աշխատանքով: Տվյալ ընկերը, թեպէտ և չի պատկանում բանվորների թվին, մտնում է պրոլետարների գործի համար, կոմունիզմի պայքարի համար պայքարողների շարքը:

Բայց կուսակցութեանը սահմանափակումներ է անում կուսակցութեան մեջ մտնելու համար վոչ-բանվորներին՝ գյուղացիներին և հատկապէս ինտելիգենտներին ու ծառայողներին, վորովհետև կուսակցութեան ավելի կայուն մասը հանդիսանում են հենց բանվորները:

Մեր կուսակցութեանը կապիտալիզմը հանդիսանում է բանվորների, աշխատավորութեան վողջ մասսաների օտերը չի՛ ամենից առաջ մանրաշ-

խատավոր գյուղացուցության ընդհանուր թշնամին: Կապիտալիզմի տապալմամբ, պրոլետարական հեղափոխութեան շահագրգռված ե աշխատավորութեան վիթխարի մեծամասնութիւնը: Սոցիալիզմ կառուցելով, պրոլետարիատը միայն իր բարեկեցութեան համար չի պայքարում. գյուղացութիւնը աղքատութիւնից կազատվի միայն սոցիալիզմի միջոցով: Իրա մեջ ե բանվորների ե գյուղացիների դաշինքի հիմքը: Մեր բանվորական կուսակցութիւնն իր պայքարով պաշտպանում ե աշխատավորութեան ամենալայն մասսայի շահերը:

Բանվոր դասակարգի, նրա կուսակցութեան անելիքն ե — բացատրել այդ ամեն մի մանր գյուղացու, տնայնագործի ե այլն, դաստիարակել նրանցից պրոլետարական հեղափոխութեան ակտիվ կողմնակիցներ:

Կուսակցութիւնը Մեր կուսակցութիւնը կապված ե մասսաների հետ յետ օտուտ ե հրահրից ի բնութից բանվորների վողջ մասսային: Բայց աւրողջ մասսային ղեկավարելու համար, կուսակցութիւնը պետք ե սերտ կապված լինի մասսաներին:

«Կուսակցութիւնը չի կարող ղեկավարել դասակարգին, յեթե նա (կուսակցութիւնը) կապ-

ված չի անկուսակցան մասսաներին. յեթե գողութիւն չկա կուսակցութեան ե անկուսակցական մասսաների միջև» (Ստալին):

Ահա ինչու Լենինը միշտ սովորեցրել ե կուսակցութեանն ամեն պարագայում գտնել բանվորական մասսաների հետ կապվելու ճանապարհները, հաղթահարել բոլոր խոչընդոտները, վորպետգի հնարավոր լինի հասնել նրանց: Ահա ինչու Լենինը միշտ նախատում եր այն ընկերներին, վորոնք հեղափոխական Ֆրազների դիմակի տակ, չեյին կամենում մասսաներին մոտ գնալ, ե կուսակցութեանը կանգնեցնում եյին մասսաներից կարվելու վտանգի առաջ:

«Մասսային սպասարկելու ե նրա ճիշտ դիտակցած շահերն արտահայտելու համար, առաջավոր շոկատը, կազմակերպութիւնը պետք ե իր ամբողջ գործունեութիւնը տանի մասսայի մեջ, գրավելով նրա (մասսայի) բոլոր, առանց բացառութեան, լավագույն ուժերը» (Լենին):

Յեթե վտանգավոր ե կուսակցութեան կտրուկացումը մասսաներից, ապա պակաս կարևոր չի ե «խփոտիզմի» («պոչիզմի»), պոչից գնալու) վտանգը: Կապվելով մասսաների հետ, կոմունիստը չերբեք չպետք ե իջեցնի իր հայացքները մինչև մասսայի մակարդակը, այլ ընդհակառակը, պետք ե բարձրացնի բանվորական

մասսաների դասակարգային գիտակցութիւնը, և քաշի նրանց դեպի կոմմունիզմը:

Ամբողջ բանվորական մասսան միատեսակ գիտակից չէ: Մենք կուսակցութիւնը հենց նրա համար ենք ավանգարդ անվանում, վոր նա լավ է հասկանում բանվոր դասակարգի շահերը, կոմմունիստին նրա համար ենք համարում առաջավոր մարտիկ, վոր նա աչքի չէ ընկնում ավելի մեծ գիտակցութեամբ, բան շարքային, բանվորական, անկուսակցական մասսան:

Կուսակցութիւնը դասակարգից հեռուն է տեսնում: Բանվորների այս կամ այն խմբակը չերբեմն զեկավարվում է միայն այսօրվա շահով, իսկ կուսակցութիւնը միշտ իր առաջ տեսնում է բանվոր դասակարգի վերջնական շահերը:

Բանվորների այս կամ այն խմբակը չերբեմն զեկավարվում է իր խմբակային շահերով, միայն ավելի գործարանի բանվորների շահերով, իսկ կուսակցութիւնը միշտ յեղնում է ամբողջ բանվոր դասակարգի շահերից, վորին պետք է յենթարկված լինեն բանվորների առանձին խմբակների շահերը: Ոպպորտունիզմը, մենշեիզմը հենց դրանում է կայանում, վոր բանվոր դասակարգի վերջնական շահերը, ամբողջ բանվոր դասակարգի շահերը զոհ են բերում մանր, այսօրվա և խմբակային շահերին: Կոմմունիստը չերբեք

չպետք է զնա բանվորների հետամնաց խավերի տրամադրութիւնների պոչից, այլ պետք է մասսայի վողջ գործունեութեանը միշտ գիտակցված դասակարգային քաղաքականութեան ուղղութիւն տա:

Տեսնենք, թե կուսակցութիւնն ինչպես է աշխատում այնպիսի կազմակերպութիւններում, ինչպիսին են խորհուրդները, արհեստակցական միութիւնները, կոոպերացիան և այլն: Այդ կազմակերպութիւններում աշխատող կոմմունիստների միջոցով կուսակցութիւնը կապվում է անկուսակցական լայն մասսաների հետ, տեղեկանում է նրանց պահանջներին: Այդ լայն հասարակական կազմակերպութիւնները կուսակցութիւնը կապում են անկուսակցական մասսաների հետ:

Բայց կուսակցութիւնը հասարակական կազմակերպութիւնների միջոցով վոչ միայն կապվում է անկուսակցական մասսաներին, այլ և զեկ վարում է այդ հասարակական կազմակերպութիւններին, ապահովում է նրանց աշխատանքի այնպիսի ուղղութիւնը, վորը համապատասխանում է հեղափոխութեան խնդիրներին:

Մեր կուսակցութեան պատմութիւնը շատ որինակներ գիտե այն մասին, թե ինչպես բալշեիկները միշտ կարողացել են ճիշտ փոխհարա-

բերութիւններ կառուցել կուսակցութեան և ամբողջ բանվոր դասակարգի միջև: Համկոմկուսի փորձի վրա այժմս ամբողջ կոմիւնտերնը սովորում է մասսաներ գրավել կոմմունիզմի համար:

Վերջինք բազմաթիվ որինակներից մեկը՝ 1017 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխութիւնների միջև ընկնող շրջանը:

Ի՞նչ են արել բայրշեիկները: Ասել են նըրանք, արդյոք, թե դավաճան մենշեիկների յետևից գնացող բանվորների հետ մենք չենք խոսի: Կամ մի գուցե բայրշեիկները հայտարարել են — թե, չեթե բանվորները գնում են մենշեիկների յետևից, մենք պետք է յենթարկվենք բանվորների կամքին և հաշտվենք մենշեիկներին հետ:

Վճշ. բայրշեիկներն այդպես չեն վարվել: Նրանք իրենց ամբողջ աշխատանքը փոխադրել են մոլորված բանվորական մասսաների շրջանը, վորպեսզի պարզաբանեն նրանց ճիշտ պրոլետարական քաղաքականութիւնը և բանվորական մասսային տանեն իրենց յետևից: Բայրշեիկներն անցնում են յուրաքանչյուր բանվորական ժողով, ազիտացիա յեն մղում գործարաններում, հաստոցների (станок) մոտ: Բայրշեիկին հալածում են համաձայնողականները, բայց նա միշտ նոր ճանապարհներ է գտնում կապվելու համար

բանվորների հետ, պարզաբանելու նրանց մենշեիկների դավաճանութիւնը և պրոլետարիատի կողմից իշխանութիւնը գրավելու անհրաժեշտութիւնը:

«Բայրշեիկին հալածում են վորպես գերմանակ ան յրտես, թքում են բայրշեիկի յերեսին, բայրշեիկին ձեւակալում են ռազմաճակատում գնդակահարում, բայց և այնպես յերկրագունդը պտտվում է. — բայց և այնպես բայրշեիկներն իրենց ասածն են առաջ տանում, համառութեամբ, ամենուրեք և ամեն տեղ կրկնում են միևնույն բանը՝ «ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» «կորչեն կապիտալիստներն ու կալվածատերերը» (Կազանովիչ):

Յեվ բայրշեիկների համառ ջանքերը պսակվեցին հաջողութեամբ: Հոկտեմբերյան հեղափոխութեան ժամանակ բանվորների ճնշող մեծամասնութիւնը գնաց կուսակցութեան յետևից:

Կուսակցութիւնը և Մեր կուսակցութիւնը միեռում ու ամբողջում այն կապիտալիստների դեմ է մտեր բուրժուական մղած պայքարում չի կոփրեւումների գեմ մղած վել. իր յերկաթե միասնապայտում

կանութիւնն և գաղափարական անհաշտութիւնը կուսակցութեանը կոփել է բանվոր դասակարգի ներսում, կուսակցութեան ներսում տատանումների ու թեքում

ների դեմ մղած պայքարում: Այդ տատանումներն առաջանում են բանվոր դասակարգի և նրա կուսակցութեան վրա ներգործող մանր բուրժուական տարերքի ճնշման տակ:

Մանր բուրժուազիան ե—մանր առևտրականները, արհեստավորները, անախազործները և գլխավորը՝ գյուղացիութեանը վոր կազմում է բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը: Շրջապատում մենք արդեն հիշել ենք նկ. Լենինի խոսքերը, վոր «գյուղացու մանր, մեկուսացած տընտեսարարութիւնը» սոցիալիզմի պայքարի ընթացքում դարձնում է նրան ավելի պակաս կայուն, քան բանվորներն են թեպետ և գյուղացին նույնպես դաժան շահագործվում է կապիտալի կողմից: Գյուղացին աշխատում է հողի վրա — այդ հանգամանքը ժողովրդական է նրան պրոլետարիատին: Սակայն գյուղացին միաժամանակ հանդիսանում է մանր սեփականատեր — և այդ նրան ժողովրդական է բուրժուազիային:

Գյուղացու նման կացութիւնն առաջ է բերում նրա մոտ, ինչպէս և ամբողջ մանր բուրժուազիայի մոտ, տատանումներ, անկայունութիւն նրա ունեցած վճռականութիւնը չի բավականանում, վորպէսզի սոցիալիզմի համար սկսած պայքարն առաջ տարվի մինչև վերջնական հաղթանակը: Մանր բուրժուազիայի տատանումները,

8-92

1048 / 35357

ըր, բնականաբար, հատկապէս վորոշակի յերևան են գալիս այն ժամանակ, յերբ հեղափոխութիւնը ապրում է շինարարութեան նշանակալից դժվարութիւններ: Մանր բուրժուան անսահման գնալովում է շինարարութեան հաջողութիւններով, մանր բուրժուան ամենից շատ է փարթամ հեղափոխական խոսքեր ասում հեղափոխութեան տարած հաղթանակների շրջանում, սակայն նա անմիջապէս լքվում, հուսահատվում է հեղափոխութեան յուրաքանչյուր պարտութիւնից:

Բայց, ի հարկէ, բանվոր դասակարգը չինական պարիսպներով կտրված չի բնակչութեան մնացած խավերից: Բանվոր դասակարգը շրջապատված է տասնյակ միլիոնավոր մանր ապրանքարտադրողներով՝ գյուղացիներով: Նրանց «չի կարելի դուրս քշել, չի կարելի ճնշել, նրանց հետ պետք է հաշտ ապրել, նրանց կարելի է (և պետք է) վերակերտել, վերադաստիարակել միայն շատ տևական, դանդաղ, զգուշ կազմակերպչական աշխատանքով» (Լենին):

Պրոլետարիատի ղեկավարութիւնը գյուղացութեան նկատմամբ, այդ հենց նշանակում է, վոր բանվոր դասակարգը վերադաստիարակում է աշխատավոր գյուղացուն, իր առաջ խնդիր է դնում գյուղացական մասսան դարձնել սոցիալիզմի կայուն կառուցողներ: Մանր ապրանքար-

արտագրողի վերադաստիարակութիւնը պետք է տեղի ունենա այն չափով, ինչ չափով վոր կվերակերտվի գյուղացական տնտեսութիւնը, սակայն այդ վերակերտումը տարիները և տասնամյակների խնդիր է: Վերադաստիարակելով մանր սեփականատիրոջ, բանվոր դասակարգն իր վրա շարունակ կրում է մանր բուրժուական շրջապատի ճնշումը: Նա ճնշում է գործ դնում կուսակցութիւն վրա, բանվոր դասակարգի վրա, փորձելով առաջացնել այն տատանումները, վոր հատուկ են մանր բուրժուազիային:

«Նրանք, ապրանքաարտադրողները, շրջապատում են պրոլետարիատին բոլոր կողմերից մանր բուրժուական տարերքով, անում են նրան նրանով այլասերում են նրան, շարունակ պրոլետարիատի ներսում առաջ են բերում բեցի-դիմեր (վերադարձ դեպի վոճրագործութիւն), կամազրկութիւն, բաժան-բաժանութիւն, անհատակասութիւն, զրավչութիւնից դեպի լքումն կատարվող անցումներ»:

Մենք անսնում ենք, վոր կուսակցութիւն այս կամ այն մասը յերբեմն ընկնում է մանր բուրժուական ազդեցութիւնների տակ հատկապես հեղափոխութիւն համար ծանր մոմեսաններին: Իրանում է կուսակցութիւն զանազան ոպպողիցիաների հիմքը: Ավելի հեշտութիւն մը նման ազ-

դեցութիւնների տակ են ընկնում կուսակցութիւն ավելի անկայուն, վոչ-պրոլետարական խավերը: Այսպես, որինակ, 1923 թ. ընկ. Տրոցկու գլխավորած ոպպողիցիան, վորին կուսակցութիւն 13-րդ համագումարը բնորոշել է վորպես մանր-բուրժուական թեքում, ավելի մեծ արձագանք գտավ կուսակցութիւն վոչ-պրոլետարական խավերի մեջ, այն ժամանակ, չերբ կուսակցութիւն բանվորական մասը պաշտպանում էր լենինյան գիծը:

Մանր բուրժուական ազդեցութիւնները թափանցելով կուսակցութիւն ներսը, շլատում են կուսակցութիւն և բանվոր դասակարգի կամքի միամնականութիւնը, թերահավատութիւն, տատանումների տեղիք են տալիս, այսինքն ոգնում բուրժուազիային: Մանր բուրժուական թեքումները վտագավոր են և նրանում, վոր նրանք հանդես են գալիս հեղափոխական յոգունդներով, լոգունգներ, վոր իբր պաշտպանում են պրոլետարիատի դասակարգային շահերը:

Կուսակցութիւնը վճռական հակահարված է հասցնում մանր բուրժուական ազդեցութիւններին. նրանց դեմ մղած պայքարի ընթացքում կուսակցութիւնը կոփվում է, միշտ նորանոր փորձ կուտակելով մանր բուրժուական տարերքի հաղթահարման գործում:

II ԻՆՉՊԵՍԷԷ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒ- ՔՅՈՒՆԸ

Մարտական Գայասակ- Կուսակցության կառուց-
ճեղք—մարտական կա- վածքն անքակտելիորեն կապ-
ուուցվածք ված է այն նպատակների ու
անելիքների հետ, վորպիսին կուսակցությունը
գնում է իր առաջ:

Համեմատենք, թե ինչպես է կառուցված
Համկոմկուսը և ցանկացած սոցիալ դեմոկրա-
տական կուսակցություն, որինակ մենչևիկները
կուսակցությունը Ռուսաստանում (անցյալում):
Մրդեն առաջին իսկ հայացքից մենք նկատում
ենք խոշոր տարբերություն:

Մեր կուսակցությունը կազմված է մի կտո-
րից, նրա անդամները միացված են կարծիքնե-
րի և կամքի ամբողջական միասնությունով:

Մենչևիկների մոտ, ընդհակառակը, կան
մի շարք «խաղաղ կենակցող» հոսանքներ, վորոն-
ցից յուրաքանչյուրը կուսակցության քաշում է
տարբեր ուղղությունով:

Մեր կուսակցությունն ուժեղ է իր շարքերի
յերկաթե դիսցիպլինայով:

Մենչևիկների մոտ կուսակցության ան-
դամներն ոգավում են «լայն ազատությունով» և
իրենց գործունեության ընթացքում չեն սահ-
հանափակվում դիսցիպլինայով:

Մեր կուսակցությունը միշտ յեղել է պրո-
գետարիատի պողպատե, միասնական և դիսցիպ-
լինայի լենթարկված կուսակցությունը:

Իսկ մենչևիկները ներկայացրել են իրեն-
ցից թափթփված, փխրուն մի կուսակցություն:

Ինչպես է, վոր նման տարբերություն կա
կառուցվածքների միջև: Ինչո՞ւմն է պատճառը:

Պատճառը նրանումն է, վոր տարբեր են այն
նպատակներն ու անելիքները, վոր դրել են ի-
րենց առաջ բայլչևիկներն ու մենչևիկները:

Բայլչևիկներն իրենց առաջ խնդիր ելին դը-
րել պայքարել պրոլետարիատի դիկտատուրայի
համար: Իրենց կուսակցությունը բայլչևիկները
կառուցել են այնպես, վորպեսզի նա ընդունակ
լինի առաջնորդելու պրոլետարիատին բուրժու-
ազիային տապալելու համար: Մենչևիկները միշտ
խուսափել են բուրժուազիայի դեմ հեղափոխա-
կան պայքար մղելուց,—և նրանց կուսակցու-
թյունն իշխանություն գրավելու և իրենց ձեռ-
քում պահելու պայքարի համար յեղել է ան-
ընդունակ:

Վե՞՞ն այն մասին, թե ինչպես կառուցել
կուսակցությունը, ծագել է դեռ կուսակցու-
թյան 2-րդ համագումարում, 1903 թ., յերբ
տեղի յե ունեցել Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրա-

տական Բանվորական Կուսակցության (ՌՍԴԲԿ¹) պառակտումը: ՌՍԴԲԿ բաժանվել է յերկու մասի՝ բայլշեիկները և մենշեիկները:

Վեճն այն մասին էր, թե ով պետք է հաջրվի կուսակցության անդամ: Բայլշեիկները, վորոնք կամենում էին ստեղծել մարտական, կենտրոնացած կուսակցություն, անդամության պարտադիր պայման էին համարում կուսակցության վորևէ գաղտնի կազմակերպության մեջ մտնելը: Իսկ մենշեիկները, վորոնք ցանկանում էին ստեղծել «լայն», փխրուն կուսակցություն, կուսակցության մեջ մտնելիս պահանջում էին միայն ընդունել ծրագիրը և աշխատել կուսակցության հսկողության տակ:

Այն նպատակներն ու անելիքները, վոր դնում է իր առաջ կուսակցությունը, սահմանում են նրա կառուցվածքը: Կուսակցության շինարարության խնդիրները մենք չերբեք չպետք է դիտենք առկախ, առանց հաշվի նստելու հեղափոխության ընդհանուր խնդիրներին հետ: Ա-

1) Մինչև 7-րդ համագումարը (մարտ, 1918 թ.) մեր կուսակցությունն անվանվել է ՌՍԴԲԿ (բայլշեիկներ): 7-րդ համագումարում նա վերանվանվել է ՌԿԿ (բ) — Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն (բայլշեիկներ), իսկ 14-րդ համագումարում նա ստացել է Համկկ (բ.):

մենևին: Կուսակցության շինարարության խնդիրները մենք վճռում ենք այնպես, վորպեսզի կուսակցությունը կարողանա ավելի հաջողությամբ պայքարել պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման ու սոցիալիստական շինարարության զարգացման համար:

Կուսակցությունը կուսակցության կազմակառուցված է ղեկերպչական կառուցվածքի մոկրասական կենտրոնացման հիմունքով սանում է ղեմակրատական կենտրոնացումը, — ասվում է կուսակցության կանոնադրության մեջ:

Կուսակցության ղեկավարությունը կենտրոնացված է՝ կուսակցական ստորին մարմինները չենթարկվում են բարձր մարմիններին, կուսակցության գլուխ է կանգնած կենտրոնական կոմիտեն, վորն ընտրվում է կուսակցության հերթական համագումարներում: Կենտրոնական կոմիտեն — միասնական շտաբն է, վոր ղեկավարում է կուսակցության վողջ աշխատանքը: Այդ կենտրոնացումը ղեմակրատական է վարից մինչև վեր — բլիժի բյուրոյից մինչև կենակում կուսակցական բոլոր մարմիններն ընտրվում են: Նրանք պատասխանատու են իրենց կուսակցական կազմակերպության առաջ և պարտավոր են պարբերաբար նրանց առաջ հաշվետու լինել:

Հիմնական կուսակցական կազմակերպութիւնը հանդիսանում է բոլոր կուսակցութեան հենարանն ու ամրոցը հանդիսանում է Ֆաբրիկա-գործարանային բջիջը: Վորովհետև նա ավելի մոտ է բանվորական մասսային և հանդիսանում է մասսային, անկուսակցական բանվորների մեջ կուսակցութեան ազդեցութեան հիմնական տարածողը: Ֆաբրիկա-գործարանային բջիջի միջոցով կուսակցութիւնը հաշվի յետևում բանվորական մասսաների տրամադրութիւններն ու պահանջները: Ֆաբրիկա-գործարանային բջիջներում հավաքված է կուսակցութեան հիմնական, բանվորական մասը: Բանվոր կոմունիստներն, իրենց բջիջի միջոցով մասնակցում են կուսակցութեան քաղաքականութեան բոլոր հարցերի քննութեանն ու վորոշմանը:

«Յուրաքանչյուր գործարան պետք է լինի մեր ամրոցը» – գրել է Լենինը դեռ 1902 թվին: Կուսակցութեան բջիջային հիմունքով կառուցելը բղխում է մեր կուսակցութեան հեղափոխական բնույթից: Վորովհետև միայն գործարանային բջիջներն են հնարավորութիւն տալիս հարատև կապ պահպանելու բանվորական մասսաների հետ և հարկավոր մոմենտին պայքարի համար մտքի-լիզացիայի յենթարկելու բանվոր դասակարգի ուժերը: Սոցիալ-դեմոկրատական վոչ մի կու-

սակցութիւնն չի կառուցված բջիջային հիմունքով: Ներկայումս, Համկոմկուսի որինակով, կոմունիստական բոլոր կուսակցութիւնները վերակազմման են յենթարկում իրենց շարքերը Ֆաբրիկա-գործարանային հիմունքով:

Կուսակցական մարմիններում կուսակցութիւնն ընտրում է իր ամենալավագոյն յեզվ փորձված անդամներին: Ճնշող մեծամասնութեամբ կուսակցական կոմիտեների գլուխ են կանգնած բայրեկիկյան հին գվարդիայի ներկայացուցիչները: Իսկ լավերից լավերին, ամենակոփված ու վաստակավոր մարտիկներին կուսակցութիւնն ընտրում է կենտրոնական կոմիտեի մեջ:

1923 թ. ուպուդիցիան, ընկ. Տրոցկու գլխավորութեամբ, ամեն կերպ փորձում էր խախտել կուսակցութեան անդամների մասսայի վստահութիւնը դեպի կուսակցական ապարատը, դեպի կուսակցութեան ղեկավարութիւնը: Իհարկե, կուսակցական ապարատի աշխատանքներում կան թերութիւններ, նրանց հարկավոր է ուղղել: Իսկ ուպուդիցիան աշխատում էր փրշել կուսակցական ապարատը, փորձում էր կուսակցութիւնը հակադրել ապարատին: Ներկայումս կուսակցական ապարատի վրա այդ նույն հարձակումն է կատարում միացյալ ուպուդիցիան ընկ. Տրոցկու և Զինովյեվի գլխավորութեամբ:

կուսակցութիւնը վճռական հակահարված տվեց օպպոզիցիայի այդ հարձակումներին: Բայլ-շեխովը (լենինիզմը) յերբեք չի նակադրել կուսակցութիւնը ապարատին: Բայլշեխիկյան տեսակետից, այդ—տարրական անդրադիտութիւնն է, քանի վոր կուսակցութիւնը չկա առանց օպպարատի: Ինչու քաշեցեք կուսակցութիւնից օպպարատը, և կուսակցութիւնը կվերածվի ժարդկանց փոշիացած ժասսայի» (Բուխարին):

Կուսակցութիւնը գիտե, վոր կուսակցութիւնն օպպարատի դեմ մղած օպպոզիցիայի պայքարը, բայլշեխովի կազմակերպչական հիմունքների դեմ մղած պայքար է, կուսակցութիւնն լենինյան ղեկավարութիւնն դեմ ուղղած պայքար է:

Կուսակցութիւնը գիտե, վոր առանց ճեղինակավոր մարմինների չի կարող գոյութիւն ունենալ օպպարատի պրոլետարական կուսակցութիւն:

Դիսցիպլինա Խատագոյն կուսակցական դիսցիպլինան,—ասվում է կուսակցութիւնն կանոնադրութիւնն մեջ, — հանդիսանում է կուսակցական բոլոր կազմակերպութիւնների ամենատառչին պարտականութիւնը:

Դիսցիպլինան հանդիսանում է կուսակցութիւնն գոյութիւնն և նրա պայքարի հաջողութիւնն ղիտավոր պայմանը: Կուսակցութիւնն ուժեղ է,

յեթե նրա բոլոր անդամները գործում են վորպէս մի ամբողջութիւն: Առանց դիսցիպլինայի կուսակցութիւնը չէր կարող կենսագործել իր առաջ գրված հսկայական անելիքները, կբայքայվեր:

Կուսակցութիւնը պետք է հավատացած լինի, վոր նրա յուրաքանչյուր անդամը կիրազործի կուսակցութիւնն ամեն մի վորոշում, անգամ յեթե նա այդ վորոշման հետ համաձայն չէ: «Փոքրիկ գործ է—իրագործել այն վորոշումները, վորոնց հետ համաձայն ես: Իժվարութիւնը նրանումն է, վորպէսզի յենթարկվես այն վորոշման, վորի հետ համաձայն չես: Դիսցիպլինայի յենթարկված լինելը կաշանում է հենց նրանում, վորպէսզի իր անձնական կամքը յենթարկի կուլեկտիվի կամքին, կուսակցական մեծամասնութիւնն կամքին, անի այն, ինչ ուզում է կուսակցութիւնը, ինչ նա անհրաժեշտ է համարում» (Սորին):

Կուսակցութիւնն մեջ մանելը կամավոր է: Բայց, յերբ դու արդեն Համկոմկուսի անդամ ես դարձել, կարողացիր պահպանել բայլշեխիկյան դիսցիպլինան: Յուրաքանչյուր կոմունիստ պրոլետարական մարտիկ է: Մենք վարում ենք աշխարհիս յերեսին շտեմնված վիթխարի պայքար բուրժուազիայի դեմ: Մենք բոլոր կողմերից

ըրջապատված ենք թշնամիներով: Սոցիալիզմը մենք կառուցում ենք թշնամու անընդհատ կրակի տակ: Մեր ուժը — բանվոր դասակարգի և նրա ավանգարդի ուժը՝ հենց այդ կազմակերպվածությունն և դիսցիպլինան է: Ահա ինչու է ենինն ասում է. —

«Ով թեկուզ վորեվե չափով թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե դիսցիպլինան (նատկապես նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի»:

«Անշուշտ, այժմ արդեն համարյա յուրաքանչյուրը տեսնում է, վոր բայլշեիկներն իշխանության զլուխ չեյին կարող մնալ վոչ թե յերկուս ու կես տարի, այլ և յերկուս ու կես ամիս, առանց մեր կուսակցության խստագույն, իսկապես յերկաթե դիսցիպլինայի» (գրված է 1920 թվին):

Աստագույն, իսկապես յերկաթե դիսցիպլինան մեր կուսակցութունը կոփել է պայքարի տասնամյակների ընթացքում: Նրա պահպանման և ամրացման հանգամանքից է կախված կուսակցության աշխատանքի հետագա հաջողութունը:

Կուսակցության բայլշեիկյան միասնութունը
Կուսակցության միասնութունն ապահովող գլխավոր յերաշխիքը հանդիսանում է

դիսցիպլինան: Կուսակցության միասնութունից է կախված պրոլետարական դիկտատուրայի ամրութունը:

«Բայլշեիկյան կուսակցության բոլոր հաջողութունների հիմնական նախապայմանը միշտ յեղել են պողպատի միասնութունը և յերկաթե դիսցիպլինան, հայացքների իսկական միասնութունը լենինիզմի հողի վրա» (Կենտկոմի և կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի առ 17 հունվարի 1925 թվի միացյալ պլենումի բանաձևից):

Այդ միասնութունը ստեղծվել է պայքարի շատ տարիների ընթացքում:

«Միասնության» յոգունքը շատ հաճախ առաջադրել են ոռուսական բանվորական շարժման ու պարտյունիստական հոսանքները: Մասնավորապես, միասնության համար չափազանց յեռանդով պայքարել է այն հոսանքը, վորին գլխավորել է ընկ. Տրոցկին (տրոցկիզմ): Բայց միասնության եյութունն ու հասկացողութունը միանգամայն տարբեր են յեղել բայլշեիկների և ու պարտյունիստների մոտ: Հատկապես ու պարտյունիստների դեմ մղած պայքարի ընթացքում է աճել ու ամրացել կուսակցության բայլշեիկյան միասնութունը:

Մենշեիկների և Տրոցկու համար կուսակցության միասնութունը նշանակում էր տար-

բեր հոսանքների միություն, հոսանքներ, վոր այս կամ այն հարցի առթիվ համաձայնության են գալիս միմյանց հետ:

Լենինը 1910 թվին այսպիսի գնահատական է տվել կուսակցության այն «միացման», վոր պատկերում եր ընկ. Տրոցկին.

«Հաշտեցնել անձնավորություններին և խրմբակներին — դրանումն է գլխավորը: Յեթե նրանք չեն համաձայնվում ընդհանուր գիծ տանելու համար, պետք է այդ գիծը մեկնաբանել այնպես, վորպեսզի նա ընդունելի լինի բոլորի համար: Ապրիլ և ապրելու հնարավորություն տուր ուրիշներին»:

Բայլճեիկներն այդպես չեյին հասկանում կուսակցության միասնությունը: Նրանք միշտ մերժել են մենչեիկյան-արոցկիստական խորհուրդը՝ «ապրիլ և ապրելու հնարավորություն տուր ուրիշներին»: Լենինը ստեղծել է դիսցիպլինայով և հայացքների անպայման միասնությամբ ամուր կուսակցություն: Կուսակցություն — վորոշ ծրագրի հողի վրա կամավոր կերպով միացված մարտիկների միություն է: Մեր կուսակցության զաղափարական հիմունքը — Լենինի ուսմունքը, լենինիզմի հետեվողական, վոչ մի թեքում չընդունող կենսագործումն է: Յեվ կուսակցությունը չի կարող թույլատրել, վորպեսզի այդ գա-

ղափարական հիմունքից աննշան նահանջ կատարվի:

Մեր կուսակցության պատմությունը լիքն է գաղափարական մարտերի յերկար շարքով, մարտեր, վոր վարել է Լենինը կուսակցության հայացքների հստակության համար: Լենինն անխնա պայքարում եր այն ամենի հետ, ով թեկուզ աննշան չափով փորձով եր շեղել կուսակցությունն իր նշած ճշմարիտ ճանապարհից:

Այդպես եր Լենինը վարվում այն տարիներում, յերբ նա կառուցում եր կուսակցությունը, յերբ նախապատրաստում եր նրան գալիք պրոլետարական հեղափոխության համար: Սակայն նա ավելի մեծ թափով եր վարում կուսակցությանը ճշմարիտ ուղիից շեղելու փորձերի դեմ՝ մղած իր պայքարն այն ժամանակ, յերբ կուսակցությունն արդեն իշխանության գլուխ է կանգնում: Այդ անհրաժեշտ եր, վորովհետև այդ դեպքում կուսակցության քաղաքականությունն ազավտղելը կարող է կործանիչ նշանակություն ունենալ հեղափոխության համար: Ընկ. Կամենյեվը, յերբ ամբողջ կուսակցության հետ միասին պայքարում եր հակալենինյան թեքումների դեմ, ճիշտ է ասել (1924 թ.), վոր «Յերբ հարց է ծագում այն մասին, վոր գուցե թե, կառավարող կուսակցության համար ավելորդ շոայլու-

թյունն է իդեոլոգիայի խիստ մաքրությունը, իդեոլոգիական ճակատում պայքարելը, այս կամ այն ընկերով կողմից կատարված սխալի բացարձակ հրապարակելը, մենք ասում ենք, վոր այդ ըստ Լենինի չեք լինի: Ըստ Լենինի, հաղթական պրոլետարական հեղափոխության կիրառման համար անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցության նպատակը ճշգրիտ գիտակցվի, վորպեսզի նրա շարքերը միացյալ լինեն, անհրաժեշտ է նրա շտաբի միաձայնությունը, ղեկավարության միասնությունը»:

Ահա ինչու մեր կուսակցությունն այնքան յեռանդուն էր պայքարում 1923 24 թ. թ. ոպպոզիցիայի, նոր ոպպոզիցիայի (14-րդ համագ.) և ներկայիս միացյալ ոպպոզիցիայի հակալենինյան սխալների դեմ:

Գաղափարական անհաշտությունը կուսակցության միասնության պահպանման անհրաժեշտ պայմանն է:

Ներկուսակցական Մեր կուսակցությունը
գեմոկրատիան յեվ կառուցված է այնպես, վոր
գիսցիպլինան նրա մեջ ներկուսակցական
դեմոկրատիան միաձուլված է յերկաթե ղիսցիպլինայի հետ:

Ներկուսակցական դեմոկրատիան նպատակ ունի բարձրացնելու կուսակցության անդամները

րի ակտիվությունն ու գիտակցությունը: Կուսակցությունը ձգում է, վորպեսզի նրա յուրաքանչյուր անդամը կուսակցական կյանքում ցույց տա ամենագործունյա մասնակցությունը: Կուսակցությունն իրեն խնդիր է դնում «բարձրացնելու կուսակցական ամենալայն մասսաների ակտիվության, կուսակցության քաղաքականության կարևորագույն հարցերի ըննության և վորոշման գործում» (14-րդ կուսհամագումարի վորոշումներից): Կուսակցությունը ձգտում է «տարածելու Լենինի ուսմունքի հիմունքները կուսակցության ամենալայն շրջաններում» (նույն տեղը): Լենինի դավ կուսակցության անդամին հնարավորություն է տալիս ճիշտ հասկանալու կուսակցության քաղաքականության խնդիրները:

Ներկուսակցական դեմոկրատիայի կիրառման հնարավորությունները կախված են մեր պաշարի պայմաններից: Որինակ, քաղաքացիական կռիվների շրջանում, կուսակցությունն ըստիպված էր նեղացնել ներկուսակցական դեմոկրատիայի շրջանակները: Այն ժամանակ, կուսակցության բոլոր ուժերը կենտրոնացված էին հակահեղափոխության դեմ մղած ղինված պայքարում: Ամբողջ կուսակցությունը զարձել էր մի ուղղական ձամբար (լազեր): Հաճախ կարգադրությունների արագությունից էր կախված

պայքարի չելըը: Կուսակցութեան պայքարի դե-
կավարութեան մեջ պահանջվում եր խիստ կենտ-
րոնացում: Յեզ մենք տենում ենք, վոր կենտրոնա-
ցումը, ռազմական հրամանների ձևով՝ այն ժա-
մանակ գերակշռում եր: Կուսակցական մարմին-
ների մեծամասնութունը նշանակվում եր վերելից
Յեզ յեթե իմպերիալիստներին հաջողվի մեզ պա-
տերազմի մեջ քաշել, ապա կուսակցութունը
նորից ստիպված պիտի լինի մի կողմը դնելու
ներկուսակցական դեմոկրատիան:

Սակայն ներկա պայմաններում ներկուսակ-
ցական դեմոկրատիայի լայն կիրառումն անշուք
անհրաժեշտ ե: Նախորդ զրուցում մենք կար-
գացինք, թե ինչպես բարձրացել ե բանվորների և
գյուղացիների անկուսակցական մասսայի ակտի-
վութունը: Վորպեսզի ամբողջ գեկավարու-
թյունը բանվոր դասակարգի նկատմամբ, վորպես-
զի պահպանվի բանվոր դասակարգի և գյուղա-
ցութեան զաշխըը, կուսակցութեան անդամների
ակտիվությունը պետք ե աճի ավելի արագ, քան
անկուսակցական մասսաների ակտիվությունը:
Իրան հասնում ենք ներկուսակցական դեմոկ-
րատիայի համառ կիրառմամբ: Կուսակցութեան
14-րդ համագումարը պահանջում ե վորպեսզի
Համկոմիտան իր բոլոր բաղկացուցիչ մասերում

կանգնի հետևողական ներկուսակցական դեմոկ-
րատիայի ուղիի վրա»:

Ներկուսակցական դեմոկրատիայի կիրառումը
նպատակ ունի ամրապնդելու կուսակցական շար-
քերը: Կուսակցութեան քաղաքականութեան խըն-
դիրները կարող են քննութեան յենթարկվել կու-
սանդամների կողմից միայն մինչև կուսակցա-
կան վորոշում ընդունելը: Նման քննությունը
պետք ե ոգնի ընդունված վորոշումները գիտակ-
ցաբար կիրառելուն:

Կուսակցական դիսցիպլինայի ամբողջական
գլխավոր պատճառներից մեկը լենինը համարում
ե «պրոլետարական ավանգարդի (այսինքն կու-
սակցութեան) գիտակցությունը» և այն, վոր կու-
սակցությունը կկարողանա «կապվել, մտտենալ, և
վորոշ չափով, յեթե ուզում եք — ձուլվել աշխա-
տավորութեան ամենալայն մասսայի հետ»: Ներ-
կուսակցական դեմոկրատիան բարձրացնում ե
կուսակցութեան անդամների ակտիվությունը,
բարձրացնում ե «պրոլետարական ավանգարդի
գիտակցությունը»: Նա միաժամանակն ապաստում
ե կուսակցությունն անկուսակցականների հետ
կապելու գործում, վորովհետև, քանի գիտա-
կից ե կուսակցութեան անդամը, այնքան ավելի
նա կարողանում ե հաջողութեամբ կիրառել կուսակ-
ցութեան դիժն անկուսակցականների շրջանում:

Ներկուսակցական ղեկավարական, այդպիսով, անբացնում ե կուսակցութեան ներքին զիսցարկնան:

Քրակցիաներն ու կուսակցութեան բալլընիկ-խմբավորումներն յան միամտութիւնը վոչինչ անբույրացելի յեն ընդհանուր շունի Ֆրակցիաների և խմբավորումների գոյութեան հետ:

Կուսակցական կազմակերպութեան շրջանակներում, կուսակցական ժողովներում, կոնֆերանսներում, համագումարներում, կուսակցութեան անդամը հնարավորութիւն ունի արտահայտելու իր տեսակետները կուսակցութեան քաղաքականութեան բոլոր հարցերի վերաբերյալ: Կուսակցութիւնն իր համագումարների բանաձևներում, նույնպէս և կենտկոմի հուլիսյան պլենումը (1926 թ.), առաջարկում են մեծագուշն ուշադրութիւնը դարձնել կուսակցութեան անդամների կողմից արվող կուսակցական ապարատի աշխատանքի պակասներին, կուսակցական գծի խեղաթիւրման մասին արվող բոլոր ցուցմունքներին: Առողջ քննադատութիւնը, վոր նպատակ ունի ոգնելու կուսակցութեան աշխատանքին, անկասկած հաշվի ե առնվում: Հատկապէս մտքերի փոխանակութեան կարգով, կուսակցական կազմակերպութեան կողմից պայքարի փորձի ընդհանրացման կարգով ե մշակվում կուսակցու-

թեան արկտիկան: Սակայն, յեթե կուսակցութիւնը վորոշակի վորոշում ե ընդունել, այդ վորոշումը պետք ե իրագործվի կուսակցութեան բոլոր անդամների կողմից առանց բացառութեան:

Ֆրակցիան կազմակերպվում ե կուսակցութեան կազմակերպչական շրջանակներից դուրս: Կուսակցութեան թիկունքում նրա անդամների այս կամ այն խմբակը ըննում ե կուսակցական գծի դեմ պայքարելու միջոցները, մշակում են իրենց նայացքներն արդեն կուսակցութեան կողմից ընդունված հարցերի նկատմամբ, տամսնում են իրենց խմբակային ղիսցիպլինան, վորը հակադրվում ե հակակուսակցական ղիսցիպլինային:

Պառակտողական, Ֆրակցիան աշխատանքի վառ որինակ ե տալիս Լաշեիչի, Բելենսկու և ուրիշների գործը, վոր քննվել ե Կենտկոմի և կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի միացյալ պլենումում (1926 թ. հուլիս):

Մի խումբ ընկերներ կուսակցութիւնից գաղտնի կուսանդամների ժողով են հրավիրվել ժողովականների հատուկ ընարութեամբ: Այդ ժողովում կոչ են արել պայքարելու Կենտկոմի դեմ, կուսակցութեան գծի դեմ: Յերբ այդ մասին տեղեկացել ե կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովը, վերջինս ընկերներին պատասխանատ-

վուժյան և կանչել նրանց պառակտողական քայլի հոտար, կուսակցության բարձր մարմնի առաջ կուսակցության դեմ կազմակերպված այդ ֆրակցիոն լեյուժի մասնակիցներին վրամանք սկզբում փորձել են նույնիսկ ժխտել ժողով հրավիրելու փաստը և կտրականորեն հրաժարվել են թվել ժողովի մնացած մասնակիցներին:

Թույլատրել ֆրակցիաների կազմակերպելը— կնշանակեր կործանել կուսակցության լենինյան միասնականութունը, կուսակցութունը դարձնել հոսանքների միութուն: Ֆրակցիան նոր կուսակցութունն է իր սաղմային վիճակում: Թույլատրել ֆրակցիաները, նշանակում է վերացնել կուսակցական ղեկավարության միասնականութունը, իսկ վորովհետև կուսակցութունը կառավարող է, ապա կուսակցական ղեկավարության յերկուսելը իր հերթին կառաջացնե պետության և հեղափոխության ղեկավարության լերկուսելը:

Դեռ մոտ անցյալում ընկ. ընկ. Ջինովյեֆևու կամեններ, վորոնք այժմս ընկ. Տրոյկու հետ միասին կուսակցության մեջ ֆրակցիոն աշխատանք են կատարում, շատ լավ պարզաբանել են ֆրակցիաների և խմբավորումների վողջ հակայական փաստը: Տեսնենք, թե ինչ է ասել ընկ. Ջինովյեֆև այդ հարցի առթիվ 1923 թվին, ընկ.

Տրոյկու ոպպոզիցիայի դեմ մղած պայքարի ընթացքում և ինչ է անում ոպպոզիցիան այժմ 1926 թվին:

Ինչ է ասել ընկ. Ջինովյեֆև 1923 թվին

«Իշխանության ամենաթույլ յերկուսելը պրոլետարական ղեկատաուրայի կործանումն է: Յեթե մենք ղիմացել ենք, չնայած բոլոր դրժբախտություններին, վոր թափվել են մեր վրա բոլոր կողմերից, ապա միայն նրա համար, վոր կուսակցությունը մեզ մոտ յեղել է միաձույլ»:

(1923 թ. դեկտեմբերի 31-ի ղեկուցումից)

«Թույլատրել ֆրակցիոներականությունը և խմբավորումները մեր կուսակցության մեջ ներկայումս նշանակում է թույլատրել իր սաղմի մեջ յերկու կառավարություն, աչսինքն թույլատրել պրոլետարական ղեկատաուրայի յերկուսվելը, այսինքն պատրաստել պրոլետարական ղեկատաուրայի կործանումը»:

(1923 թվի դեկտեմբերի 11-ի ճառից):

Ինչ է անում ոպպոզիցիան 1926 թվին

«Ֆրակցիոն պայքարի պատասխանատուությունը բարձելով այդ պայքարին մասնակցած կուսակցության բոլոր անգամների վրա, կուսակցությունը չի կարող պառակտողական այդ

պայքարի համար քաղաքականապես պատասխանատու չհամարել 14-րդ համագումարի ու պողիցիայի ղեկավար, Համկոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի անդամ ընկ. Զինովյեվին, վորի համախոհները ախտիվագուշն մասնակցութիւն են ցույց տալիս ֆրակցիոն աշխատանքին և ոգտագործում են ընկ. Զինովյեվին լենինի, Կոմինտերնի գործկոմի ապագարատը, առավել ևս, վոր ընկ. Զինովյեվի կողմից իբ համախոհներին դատապարտելու և նրանցից անջատվելու աննշան վորձ անգամ չի յեղել»:

(Համկկ (ք) յեվ ԿԿՀ միացյալ պլենումի՝ Լաշեվիչի և ուրիշների գործի առթիվ - «Կուսակցութիւն միասնութիւն մասին» ընդունած բաձկից): Գ

1923 թվից սկսած մեր պայքարի պայմանները բարդացել են: Մենք աճում ենք, ամբողջում են անտեսութիւն սոցիալիստական տարբերը, սակայն միաժամանակ ուժեղանում են յեվ դժվարութիւնները, վորոնց մենք պետք է հաղթահարենք: Ուստի և, 1923 թվից սկսած, ֆրակցիաների ու խմբավորումների վտանգը կուսակցութիւն համար աճել է, և միանգամայն ճիշտ են մտում ընկ. Զինովյեվի խոսքերը, ասված 1923 թվին, արոցկիզմի դեմ տարված դիսկուսիայի պայմաններում, իտպեր, վոր պարզա-

բանում են լենինիզմի զաղափարները կուսակցութիւն միասնութիւնը վերաբերող խնդրում: Բայց փոխվել են Զինովյեվի ու Կամենի գլխավորութեամբ աշխատող մի խումբ ընկերների գործերը: Նրանք լենինիզմից սահեցին և ընկան արոցկիզմի գիրկը:

Կուսակցութիւնը չի հանդուրժի ֆրակցիան աշխատանքը: Կուսակցութիւն 14-րդ համագումարը հանձնարարել է կենտկոմին «վճռական պայքար մղել կուսակցութիւն միասնականութիւն խախտման ամեն տեսակի վորձերի դեմ, անկախ այն բանից, վորտեղից կծագեն զբանք և ում ղեկավարութեամբ կկատարվեն»:

Կուսակցութիւնը հիշեցնում է ֆրակցիոններականներին այն, ինչ ասված է 10-րդ համագումարում ընդունված «կուսակցութիւն միասնութիւն մասին» լենինյան բանաձևում. —

«Համագումարն առաջարկում է անհապաղ ցրել այս կամ այն պատճառով վրա ստեղծված բոլոր խմբակներն առանց բացառութիւն և հանձնարարում է բոլոր կազմակերպութիւններին խտապես հետևել արգելելու համար վոր և է ֆրակցիոն յելույթ: Համագումարի այս վորոշման չկատարելուն պետք է անպայման հետևի կուսակցութիւնից անմիջապես արտաքսելը»:

Ներկայիս սօվգոզի- Մենք արդեն ասել ենք, ցիան չեմ կուսակ- վոր սփորարար թեքումները ցուրյունը հանդես են դալիս այն ժա- մանակ, յերբ յերկիրն ապրում է լուրջ դժվար- թուլթյուններ: Այդ ժամանակ առաջ են գալիս տատանումներ կուսակցության առանձին խավե- րի մեջ, այդ ժամանակ կուսակցության ավելի անկալուն մասերը հեշտությամբ յենթարկվում են մանր բուրժուական ազդեցություններին:

Հակալենինյան թեքումները դարգացել են 1920—21 թ., յերբ կուսակցությունը դժվարա- գույն անցում էր կատարում ռազմական կոմ- մունիզմից դեպի նեպոլ: 1923 թվին աշնանը մենք ապրել ենք անսեսական ճգնաժամ, յերբ գյուղը, վորպես գնորդ, արդյունաբերական ապրանքնե- րի բարձր գներին հետևանքով «գործադուլ էր հայտարարել»: Վերջապես, 14-րդ համագումարին և ներկայումս մենք դժվարություններ ենք ապրում յերկրի ինդուստրիացման ինդրի իրա- գործման ասպարիզում. ոգտագործված է ար- դյունաբերության ամբողջ հին կահավորումը, անհրաժեշտ է յերկրի ներսում միջոցներ գտնել արդյունաբերության վերակահավորման համար, նոր գործարաններ կառուցելու համար: Ներկա- լիս սպառզիցիան արտահայտում է հենց այն տա- տանումները, վոր հանդես են լիկել կուսակցու-

թյան (շատ փոքր) մասի մեջ մեր ապրող զըժ- վարությունների հետևանքով: Նա արտահայտում է նույնպես գյուղից արդյունաբերության մեջ հոսող բանվոր դասակարգի անկալուն նոր խա- վերի տրամադրությունները:

Յերբեմն նման տարակուսական հարց ես լսում.—ինչպես կարող է պատահել, վոր կու- սակցության վաստակավոր առաջնորդները դառ- նում են հակալենինյան թեքումների կրողներ:

Բայց արդեն լենինը մատնանշել է, վոր սխալվել կարող են ամենքը և անգամ ամենա- հեղինակավոր առաջնորդը: Կարևոր է միայն չախնել իր սխալի վրա, և ժամանակին հրաժար- վել նրանից:

«Ամեն վոք դիտե, վոր մեծ տարածայնու- թյուններն աճում են յերբեմն ամենափոքր, ան- նշան նույնիսկ սկզբում, տարածայնություննե- րից: Ամեն վոք դիտե, վոր աննշան վերքը կամ նույնիսկ ճանկածքը, վորպիսիները յուրա- քանչյուրն իր կյանքում ստացել է տասնյակ- ներով, ընդունակ են վտանգավոր և անգամ մա- հացու հիվանդություն գառնալու, յիթե վերքը թարախակալի, յիթե արյան վարակումն առա- ջանա: Այդպես է լինում բոլոր, նույնիսկ գուտ անձնական, կոնֆրիկտների ժամանակ: Այդպես է լինում և քաղաքակրթության մեջ:

Ամեն մի, նույնիսկ աննշան, տարածա-
նություն կարող է դառնալ բազաքահանապես
վտանգավոր, յեթե հնարավոր է հանդիսանում
այն, վոր այդ տարածախնությունը կզարգանա
մինչև պառակտում» (Լենին)։

Նոր ուղղութիւն մտաւցել է լենինյան այդ
նախազգուշացումը։ Նա վոչ միայն չի հրաժար-
վել իր սխալներից, սխալներ, վոր դատապարտ-
ված է կուսակցութեան 14-րդ համագումարի կող-
մից, այլ շարունակում է պնդել և զարգացնել
այն։ Ընկ. ընկ. Կամենյեվի և Զինովիեվի գլխա-
վորութեամբ նոր ուղղութիւն, Լենինի ուսմուն-
քից սահել է դեպի արոցկիզմը, դեպի այն տրոց-
կիզմը, վորը դեմ, ամբողջ կուսակցութեան հետ
միասին կատաղի պայքար է մղել մի քանի տարի
շարունակ։ Կուսակցութեան ու նրա Կենտրոնա-
կան Կոմիտեի դեմ պայքարելու համար նոր
ուղղութիւն հրաժարվում է լենինյան ավանդ-
ներից և միանում ընկ. Տրոցկու հետ, նրա՝ կու-
սակցութեան և Կոմիտեերնի կողմից դատապարտ-
ված պլատֆորմին։

Ուղղութիւնի Ֆրակցիոն աշխատանքը կու-
սակցութեանը կանգնեցրել է պառակտման վտան-
գի առաջ։ Կենտկոմի և կենտրոնական վերա-
հսկիչ հանձնաժողովի միացյալ պնդումը ստիպ-
ված եր մի շարք միջոցներ ձեռք առնել, կատեց-

նելու համար ուղղութիւնի Ֆրակցիոն աշխա-
տանքը։ Ընկ. Զինովիեվը, վորպես ուղղութիւնի
Ֆրակցիոն աշխատանքի համար անմիջական պա-
տասխանատուություն կրող, հանվում է համկոմ-
կուսի կենտկոմի քաղբյուրոյի կազմից։

Կուսակցութեան միասնականութեան պահ-
պանման և ամրապնդման կարեորութեան մա-
սին պնդումի բանաձևն ասում ե. —

«Կուսակցութեանը ձեռք է բերել նշան ս-
կալից հաջողութեաններ անտեսական շինարա-
րութեան և բանվորական գլուղացական մասսա-
ների նյութական բարեկեցութեան բարձրացման
ընդազմառում, սակայն կուսակցութեանը զգաս-
տորեն հաշվի յե առնում, վոր այդ հաջողու-
թեանները հանդիսանում են միայն առաջիննե-
րը և, կարող է պատահել անհրաժեշտ բայերն՝
արված սոցիալիզմի ճանապարհին։ Մեր առաջ
կա նսկալական և ամենագովարին աշխատանք
սոցիալիզմի հետագա դործնական շինարարու-
թեան և բանվորութեան և չքավորութեան նյութա-
կան վերելքը մեծ բարձրութեան վրա դնելու
համար։

Դրա համար անհրաժեշտ են մեր պրոլետա-
րական շարքերի ավելի մեծ միաձուլութեան ու
դիպիպլինան. Դրա համար անհրաժեշտ է պրո-
լետարական ավանգարդի միասնութեան, մեր

կուսակցութեան միասնութեան պահպանումն ու հետագա ամրացումը» (Կենտկոմի և կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի հուլիսյան պլենումի բանաձևից)։

Հ ա ը ց ե ը

1) Ի՞նչու մեր կուսակցությունն անվանում ենք բանվորական։

2) Ի՞նչ է նշանակում կուսակցութեան կառուցումը դեմոկրատական կենտրոնացման հիմունքներով։

3) Ինչո՞ւ Լենինն ասել է. «Ով թուլացնում է դիսցիպլինան, նա ոգնում է բուրժուազիային»։

4) Ի՞նչու զաղափարական անհաշտությունը հանդիսանում է կուսակցութեան միասնութեան զրավակներ։

5) Ինչո՞ւ կուսակցությունը պետք է կիրառի ներկուսակցական դեմոկրատիան։

6) Ինչո՞ւ անթույլատրելի չեն ֆրակցիաներն ու խմբավորումները կուսակցութեան ներսում։

Աշխատանք

1) Զբույցի մեջ արված է կուսակցութեան կազմի և աճման դիագրամներ 1924 թվի հունվարի 1-ից մինչև 1926 թվի հունվարի 1-ը։ Նման

դիագրամն կազմիր և բո ձեռնարկութեան կոմբլիճի վերաբերյալ։

2) Զբույցի նյութերի հիման վրա գրիր հետևյալ յերկու հարցերի պատասխանը.

ա) Ի՞նչու մեր կուսակցությունը բանվորական է։

բ) Ի՞նչու անհրաժեշտ է կուսակցութեան միասնականությունը։

12. ԼՈՊԱՏԻՆ, Հաղթանակ չերկրի վրա, պատկերազարդ, 70 էջ, 1926 թ., Յերևան. » — ր. 10 կ.
13. ԿԱԼՄԱՆՍՈՆ ՅԵՎ. ԲԵԿԱՐՅՈՒԿՈՎ. Պահպանիր ասողջությունդ, 48 էջ, 1925 թ., Յերևան » — ր. 15 կ.
14. ԿԱՍԻՄԵՆԿՈ. Կոմյերիտները գյուղում, 64 էջ, 1925 թ., Յերևան » — ր. 20 կ.
15. ԿԱԶԼՈՎ. Ասորյա, պատմվածք, 48 էջ, 1925 թ., Յերևան — ր. 20 կ.
16. ԿՈՒՉՄԻՆ. Քրիստոս Հնարյալ ի մեռելոց, 27 էջ, 1926 թ., Լենինական . . . » — ր. 15 կ.
17. ԿՎԻՐԻՆԳ. Կուսակցությունը գյուղում, 88 էջ, 1926 թ., վաղարշապատ . . . » — ր. 30 կ.
18. ՄԵԴՎԵԴԵՎԱ-Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ. Հեղափոխության հերոս, 72 էջ, 1926 թ., Յերևան » — ր. 25 կ.
19. ՄԻՐԱՇԵՎՍԿԻ. Յերիտ. Կոմ. Ինտերնացիոնալի պատմությունը, 64 էջ, 1925 թ., Յերևան » — ր. 10 կ.
20. ՄԱՏԼԻՆ. Կոմյերիտմիությունը բանտերում 90 էջ, 1925 թ., Յերևան . . . » — ր. 25 կ.
21. ՄԻՐԱՇԵՎՍԿԻ. Քրեստոմատիա Կոմյերիտ. պատմության, 62 էջ, 1926 թ., Յերևան » — ր. 25 կ.
22. ՇԱՀԳՅԱԼԴԻ, Ա. Գյուղացին ու բանվորը ցարի ժամանակ, 29 էջ, 1925 թ., Յերևան — ր. 8 կ.
23. » Մեր գյուղը, 16 էջ, 1925 թ., Յերևան — ր. 8 կ.
24. ՉՈՒԲԱՐ, ՅԵ. Սկզբում, 48 էջ, 1926 թ., Լենինական » — ր. 15 կ.
25. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ. Պարզ գրույցներ հեղոնմիկայի մասին, 171 էջ, 1925 թ., Յերևան »

« Ազգային գրադարան



NL0186149

26. ՍՍՐԳՍՅԱՆ Ա. Ողբային նավատորմը, 59 էջ
1925 թ., Յերևան . . . » — ր. 50 է.
27. ՍՍՖՐԱԶԲԵԳՅԱՆ, Գ. Մի զրույց բանակի
մասին, 20 էջ, 1925 թ., Լենինական. » — ր. 8 է.
- ✓ 28. ՍԵՄԿՈՎՍԿԻ. Մարքսիստական քրեատոմա-
տիա յերիտասարդության համար,
214 էջ, 1925 թ., Յերևան . . . » 1 ր. 20 է.
29. ԳՅՈՒՂՄԻՍՍՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ փոխադր.
Սիրաս, 26 էջ, 1925 թ., Վաղարշապատ » — ր. 10 է.
30. ՍԱՆԴՈՄԻՐՍԿԻ. Յեզրույց պատերազմից
հետո, 120 էջ, 1925 թ., Վաղարշապատ » — ր. 35 է.
31. ՎԼԱՍՆԵՆԿՈ. Աստված կամ արդյոք, 68 էջ,
1925 թ., Լենինական . . . Գինը — ր. 20 է.
32. ՏԱՐԱՆՉՅԱՆ. Խնչ պետք է իմանա և անի
անտեսա-իրավական աշխատողը կամ յերիտա-
սիության մեջ, 61 էջ, 1925 թ., Վաղար-
շապատ . . . » — ր. 20 է.
33. ԳՅՈՒՂԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ. Խորհուրդ-
ների III համագումարի մասին, 142 էջ,
1925 թ., Լենինական. . . » — ր. 50 է.
34. Ռուսկեմկուսի (բ) XIII համագումարը
յերիտասարդության մասին, թարգմ.
Վ. Փոթեյան, 104 էջ, 1925 թ., Յերևան » — ր. 40 է.